ԵՐԳԸ

Ըսուած է՝ «Զարերը երգ չունին ...»: Շիտակ խօսք: Եթէ երգը ճախրանք մըն է, պոռթկում մը՝ ուրախութեան ու օրհնութեան, փառաբանութեան եւ մաղթանքի, կոչ մը՝ հրճուանքի ու խոյանքի, որոշ է՝ չարերը չեն կրնար երգ ունենալ: Անոնց պոռթկումը մաղձ է, եւ մաղձը երգ չէ, խժալուր աղմուկ է, զզուելի՛...:

Երգը թռիչք կու տայ հոգիի: Երանգ ու բոց կու տայ բառերու: Խօսքը արգասիքն է մտքի, երգը՝ մեղեդին է սրտի: Միտքը համակարգիչն է, սիրտը՝ թրթռացող լարը...: Զարերը երգ չունին. անոնց սիրտը ուծացած, թուլցած լար է, չի թրթռար:

Եկեղեցին երգ ունի: Երգող հաւատականութիւն է, աղօթող: Աղօթքը մտքի լեզուն է, երգը՝ սրտի թրթռացումը, բառերուն թռիչք տուողը՝ շեշտ ու իմաստ: Երգը աղօթքին կու տայ թռիչք ու արձագանգ:

Առէ՛ք սաղմոսները, շարականները, երգ երգոցը, հոգեւոր երգերն ու կանդադաները, կցուրդները, եւ օրհներգները, եւ հիացէք անոնց ներդաշնակութեան ու մեղեդիին ներշնչիչ զօրութեան: Անոնք թեւ կու տան աղօթքին եւ դրական արձագանգ անոր...:

«Երգեցէ՛ք ու սաղմո՛ս ըսէք», կը պատուիրեն Տէր Յիսուսի առաքեալները: «Սաղմոսներով, օրհնութիւններով ու հոգեւոր երգերով ձեր սիրտերուն մէջ» օրհնեցէ՛ք զԱստուած: «Եթէ մէկը ուրախ է, սաղմոս թող երգէ» (Եփ. 5.19, Յակ. 5.13): Գեթսեմանիի ճամբուն վրայ, Տէր Յիսուս սաղմոս կ'երգէ իր աշակերտներուն հետ (Մարկ. 16.26): Հրեշտակները տեւապէս կ'երգեն Աստուծոյ ներկայութեան՝ երկինքի մէջ (Յայտ. 5.9, 15.3):

Եկեղեցին երգող հաւատականութիւն մըն է: Պէտք է միախմբուիլ զԱստուած փառաբանելու համար, շնորհակալութիւն յայտնելու համար, ապաշխարելու եւ ողորմութիւն խնդրելու համար, վկայելու եւ աւետարանելու համար, զիրար յորդորելու եւ քաջալերելու համար եւ, մանաւանդ, ահազանգ հնչեցնելու համար գործի...:

Անտարակոյս, կարելի է այս բոլորը ընել առանց երգի: Աստուած կը լսէ մեր փսփսուքն ալ: Մեր մտքին խորհուրդները, մեր սրտին փափաքները չեն կրնար ծածկուած ըլլալ Անկէ:

Հակառակ այս իրողութեան, մեր բառերը՝ ո՛րքան ալ ազնիւ, կը մնան անարձագանգ՝ առանց երգի: Երգը խոյանք կու տայ անոնց, շեշտ ու իմաստ:

Ալէլուիա՛: Նոր ե՛րգ երգեցէք Տէրոջ...:

ՎԵՐ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱՐՃԵԱՆ

digitised by A.R.A.R.@